



ՀՀ Արարատի մարզ գ. Լանջազատ /Զովաշեն/

Հեռ. (Тел.)

« 10 » 12 2013 թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՁԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 08.01.2013Թ.- ԻՑ ՄԻՆՉԵՎ 10.12.2013Թ.- Ի
ԸՆԹԱՅՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՎԱԾ ՍՈՑ. ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ
ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2013 թվականի դեկտեմբերի 10 – ին Լանջազատի գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում:

Նախագահում էր համայնքի ղեկավար Հ. Հակոբջանյանը, քարտուղարում էր գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Ա. Մելքոնյանը:
Մասնակցում էին Լանջազատ համայնքի ավագանու անդամները, գյուղապետարանի աշխատակազմը, մշակույթի տան, գրադարանի աշխատակիցները, համայնքի ընտանեկան բուժբույրը, հանրակրթական դպրոցի տնօրենը, ինչպես նաև համայնքի բնակիչները:

ԼՍԵՑԻՆ -- Արարտի մարզի Լանջազատ համայնքի ղեկավար Հ. Հակոբջանյանի հաշվետվությունը 08.01.2013 թ. – ից մինչև 10.12.2013թ.- ի կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՁԱՆԱԳՐՎԵՑ, որ

2013թ. -ին Լանջազատի գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.
Գյուղապետի և ավագանու անդամների կողմից արձանագրվել է 387 ընդունելություն:
Ընդունելությունների ընթացքում բարձրացված խնդիրները քննարկվել են համայնքի գյուղապետարանի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և կատարվել են համապատասխան լուծումներ:

Գյուղապետարանը բնակիչներին տրամադրել է շուրջ 461 տեղեկանք, ստացել 78- ից ավել պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, դրանք քննարկվել են սահմանված ժամկետներում, տրվել պատասխաններ:

2013թ. -ի ընթացքում համայնքի վարչական տարածքում պարբերաբար իրականացվել են սանմաքրման աշխատանքներ, մաքրվել են ոռոգման ջրատարները, փողոցները: Ամիսը 4 անգամ կատարվում է աղբահանություն:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման, սահմանների ճշտորման և հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ :

Համայնքի ղեկավարի աջակցությամբ ստացվել և համայնքի բնակիչներին է բաժանվել թունաքիմիկատներ, դիզ.վառելիք և սերմեր:

2013թ.- ի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա / հողի հարկ՝ 2100.4 հազար դրամ.

բ / գույքահարկ որից.

1.շենք և շինություններ՝ 250.0 հազար դրամ.

2.ավտոմեքենաներ՝ 2131.3 հազար դրամ.

գ / տեղական տուրք՝ 82.0 հազար դրամ

դ / ոչ հարկային եկամուտներ՝ 724. 3 հազար դրամ

Համայնքում իրականացվել է մի շարք միջոցառումներ.

Հանդիսավորությամբ նշվել է հունվարի 28 – ը՝ ազգային բանակի օրը , նշվել է նաև ազգային ծիսական տոներից 2 – ը՝ Տեառնընդառաջը և Ս. Չատիկը ինչպես նաև կանանց միջազգային օրը: Մեծ շուքով համայնքը նշել է մայիսյան հաղթանակների տոնը, մասնավորապես մայիսի 9 –ին նշել է հայրենական մեծ պատերազմի և Շուշիի ազատագրման օրը: Այդ օրը նշվում էր ազգային ծիսական տոնը՝ համբարձումը, որը տոնվեց վերը նշված տոների հետ:

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 2400.0 հազար դրամ ֆինանսական աջակցություն:

Հուղարկավորության նպաստ՝ 100.0 հազար դրամ

Համայնքում նախադպրոցական դաստիարակությունը պատշաճ կազմակերպելու համար հատկացվել է 556.0 հազար դրամ.

Աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 1596.0 հազար դրամ.

Մասնակի բարեկարգվել է համայնքի գլխավոր՝ Մ. Մաշտոցի փողոցը և 3 կմ երկարությամբ անցկացվել է ցերեկային լուսավորություն, ինչպես նաև վերանորոգվել է գերեզմանատներ տանող 2 ճանապարհները.

2013թ կատարվել է կուլտուրայի տան բակի բարեկարգում և ծառատունկ, փողոցների մասնակի բարեկարգում, խմելու և ոռոգման ջրի ցանցերի վերանորոգում և ջրատարերի մաքրում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Հ. ՀԱՎՈՐՁԱՆՅԱՆ